

Զարուհի ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
Երևանի պետական համալսարան

**ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԳՈՐԾՐՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

Տվյալ հոդվածում քննարկվում է Moodle հարթակում ուսումնական գործընթացի կազմակերպումը հեռավար եղանակով: 21-րդ դարում առցանց ուսուցումը միջազգային կրթական համակարգի զարգացման կարևորագույն ուղղություններից է: Հանդիսանալով որակապես նոր կրթական միջավայր՝ այն հեռանկարային է համացանցային հնարավորությունների զարգացման և տեղեկատվական տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման շնորհիվ: Կրթական համակարգում նորագույն տեխնոլոգիաների ներդրումը նպաստել է ուսումնական գործընթացի առավել լիարժեք և արդյունավետ կազմակերպմանն ու իրականացմանը: Հեռավար ուսուցման մոդելի կիրառումը միտված է նաև ուսումնական ծրագրերի և դասավանդման մեթոդների բազմազանեցմանը: Հոդվածում ներկայացված են ուսումնական գործընթացում լայնորեն կիրառվող մեթոդները, որոնք ուղղված են անգլերեն բանավոր և գրավոր հաղորդակցական հմտությունների զարգացմանը:

Բանալի բառեր. հեռավար ուսուցում, առցանց ուսուցում, հեռավար ուսուցման հարթակ, հեռահաղորդակցություն, Moodle ուսումնական հարթակ, Անգլերենը հատուկ նպատակների համար, դասավանդման մեթոդներ

2020 թվականից ի վեր ամբողջ աշխարհում համավարակի տարածման և կտրուկ աճի պայմաններում, ուսումնական գործընթացը հիմնականում կազմակերպվում է հեռավար եղանակով: Հեռավար ուսուցումն իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցների լայն կիրառմամբ: Այն կրթական գործընթացը կազմակերպելու որակապես նոր ձև է, որն ենթադրում է նոր մոտեցումներ և հնարավորություններ:

Հեռավար կրթություն իրականացնելիս անհրաժեշտ է պահպանել հեռավար ուսուցման հարթակի օգտագործման հիմնական կանոններն ու պահանջները, հստակեցնել ուսումնական գործընթացի կազմակերպման մեթոդները՝ ապահովելով դասավանդման արդյունավետությունը և կրթական վերջնարդյունքները:

Կրթական և տեղեկատվական ոլորտի մասնագետների կարծիքով հեռավար ուսուցման զարգացման հիմնական փուլը սկսվել է 1969 թվականին՝ աշխարհում առաջին հեռավար ուսուցման համալսարանի՝ Մեծ

Բրիտանիայի Բաց համալսարանի հիմնադրումով: Այն ազդարարեց բաց կրթության դարաշրջանի սկիզբը, որից հետո տարբեր երկրներում մի շարք բաց համալսարաններ հիմնադրվեցին՝ զգալի թափ հաղորդելով հեռավար ուսուցման տեսական և գործնական հիմքերի զարգացմանը: Համալսարանի անվանումը բացատրվում էր դրա մատչելիությամբ, ինչը պայմանավորված էր ոչ բարձր գնով և լսարանային պարապմունքներին ոչ այնքան հաճախ այցելելու հնարավորությամբ: Հետագա տասնհինգ տարիների ընթացքում ամբողջ աշխարհում նկատվեց ոչ ավանդական համալսարանների թվի կտրուկ աճ. ստեղծվեցին մոտ 200 նմանատիպ ուսումնական հաստատություններ /Բեզիրջյան, Խաչատրյան և ուրիշներ, 2017: 6-7/:

21-րդ դարում համացանցի հնարավորությունների ընդլայնումը բեկումնային դարձավ հեռավար ուսուցման լայնատարած ներդրման և հետագա զարգացման համար: Հեռահաղորդակցումը և հետադարձ կապի ապահովումը, անկախ գտնվելու վայրից, դարձան արդի կրթության կարևորագույն բաղադրիչներ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանխատեսումների համաձայն՝ 21-րդ դարում սովորողները լսարանում անցկացնելու են ուսումնառության համար հատկացված ժամանակի ընդամենը 30-40%-ը: Մյուս 40%-ը ծախսելու են հեռավար ուսուցման վրա՝ ժամանակակից հաղորդակցական միջոցների կիրառմամբ, իսկ մնացած ժամանակը տրամադրելու են ինքնակրթությանը /unesdoc.unesco.org/:

Հեռավար ուսուցումը որպես արագ զարգացող ոլորտ ունի անսահման հնարավորություններ: Հեռավար ուսուցման առավելություններից են.

ա/ հասանելիությունը, որը բացառում է աշխարհագրական սահմանների և տարածքային խոչընդոտների առկայությունը ուսուցման գործընթացում,

բ/ նորարարությունը, որը կրթության մեջ նորագույն տեխնոլոգիաների ներդրումն է առավելագույն հնարավորությունների մատչելիությամբ,

գ/ շահավետությունը, որն առցանց ուսուցումը դարձնում է տնտեսապես արդյունավետ՝ կրճատելով ընթացիկ ծախսերը:

Բովանդակային առումով հեռավար և առկա ուսուցման նպատակները նույնն են, սակայն տարբեր են նյութի մատուցման ձևը և դասախոս-ուսանող փոխադարձ կապը՝ պայմանավորված հեռավար ուսուցման կազմակերպման հարթակի առանձնահատկություններով և հնարավորություններով: Հեռավար ուսուցումը տարբերվում է ավանդականից նրանով, որ ստեղծվում է նոր կրթական միջավայր: Առցանց ռեժիմով՝ հեռահաղորդակցության միջոցների օգնությամբ կազմակերպվում է

հեռավար ուսուցումը, որի ընթացքում համատեղ կամ խմբային աշխատանքը, քննարկումներն ու բանավեճերը յուրաքանչյուր հեռավար դասի առանցքային մասն են կազմում: Էլեկտրոնային ուսումնական ձեռնարկների, դասագրքերի, տեսանյութերի, ձայնագրությունների, էլեկտրոնային գրադարանների, տեղեկատվական շտեմարանների, կայքէջերի, և տարբեր համացանցային ռեսուրսների գործածումը հեռավար ուսուցման գործընթացի անբաժան մասն են կազմում:

Հեռավար ուսուցման բազմաթիվ դրական կողմերին զուգընթաց, ոչ ավանդական ուսուցման ժամանակ երբեմն նկատելի են նաև դժվարություններ՝ ուսանողների կողմից տեղեկատվության ընկալման և յուրացման, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաներին ոչ բավարար չափով տիրապետելու առումով: Ուստի, հեռավար ուսուցումն ունի թե՛ առավելություններ և թե՛ թերություններ: Հեռավար ուսուցումը համակարգչի կամ բջջային հեռախոսի և համացանցի առկայության դեպքում մատչելի և հասանելի է յուրաքանչյուրի համար՝ անկախ գտնվելու վայրից, պահանջելով նվազագույն ծախսեր: Հեռավար ուսուցման կազմակերպումը կարող է նաև ավելացնել այլ քաղաքներից և երկրներից տվյալ բուհում սովորել ցանկացող ուսանողների թիվը: Առցանց կրթությունը ստեղծում է բազմակողմանի հնարավորություններ ժամանակակից ծրագրային և տեխնիկական միջոցների կիրառմամբ: Համացանցից համակարգիչ ներբեռնելով լրացուցիչ թեմատիկ նյութ և այն վերբեռնելով հեռավար ուսուցման հարթակ՝ այն կարելի է անմիջապես օգտագործել հեռավար ուսուցման գործընթացում՝ քննարկվող նյութը դարձնելով առավել ամբողջական և հետաքրքիր: Բացի այդ, հեռավար ուսուցման հարթակում վերբեռնված ուսումնական նյութը և հանձնարարությունները թույլ են տալիս բացակայող ուսանողներին հետևել դասընթացին և ինքնուրույն կատարել տրված առաջադրանքները: Ուսուցման գործընթացում, հաշված վայրկյանների ընթացքում, Google որոնողական ցանցի միջոցով ուսանողը կարողանում է հայթայթել անհրաժեշտ տեղեկատվություն և անմիջապես կատարել տրված հանձնարարությունը առանց լրացուցիչ պատրաստվածության:

Հեռավար ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպումը, անկասկած, ունի բացասական կողմեր: Բացակայում է ուսանողի և դասախոսի միջև անմիջական շփումն ու հաղորդակցումը: Դեմ առ դեմ ուսուցմանը /face to face learning/ փոխարինում է դեմ առ էկրան ուսուցումը /face to screen learning/: Ոչ բոլոր ուսանողներն ունեն անհատական համակարգիչ կամ անհրաժեշտ տեխնիկական պահանջներին համապատասխանող համակարգիչ և համացանցի հասանելիություն: Երբեմն նաև տեխնիկական ոչ բավարար գիտելիքների առկայությունը թույլ չի տալիս լիարժեք կիրառել հեռավար ուսուցման բոլոր հնարավոր միջոցները: Հե-

ռավար ուսուցման դասընթացն անհրաժեշտ է նախապես մշակել, համալրել էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններից ներբեռնած ուսումնամեթոդական նյութերով, ինչը ժամանակատար գործընթաց է, սակայն նպատակ ունի ուսուցումն առավել արդյունավետ դարձնել:

Առցանց ուսուցումը համակարգչային տարբեր ծրագրերի և համացանցային լայն հնարավորությունների կիրառմամբ լրացնում և ամբողջացնում է ավանդական ուսուցումը: Այն ժամանակակից կրթության հրամայականն է, որն ուսուցման գործընթացը դարձնում է բազմաբովանդակ, մեծացնում ուսանողի հետաքրքրվածությունն ու դրական տրամադրվածությունն առարկայի հանդեպ՝ նպաստելով ուսումնական նյութի արագ յուրացմանը:

Միջազգային կրթական համակարգում լայնորեն կիրառվում է Moodle (Modular Object-Oriented Dynamic Learning Environment) ուսումնական հարթակը /moodle.org/, որում, օգտվելով Zoom կամ BigBlueButton տեսակապի կազմակերպման ծրագրերից, անցկացվում են երկկողմանի կամ բազմակողմանի տեսակոնֆերանսներ ուսանողների խմբերի հետ՝ կազմակերպվում առցանց ուսումնական գործընթացը /e-learning.yzu.am/: Իսկ մուլտիմեդիա տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ մատուցվող ուսումնական նյութը լրացվում է ձայնագրություններով, տեսանյութերով, թեմատիկ պատկերներով, լուսանկարներով, գծագրերով, աղյուսակներով և այլն:

Moodle էլեկտրոնային հարթակը հեռավար ուսուցման միջավայր է, որն օգտագործվում է աշխարհի ավելի քան 200 երկրներում՝ բուհերում, դպրոցներում, քոլեջներում և տարբեր կազմակերպություններում: Ուսումնական հաստատությունը, իր սերվերին ներբեռնելով Moodle հարթակը, ձեռք է բերում ուսուցման կառավարման համակարգ

/researchgate.net/publication/333728846_Modular_Object_Oriented_Dynamic_Learning_Environment_MOODLE_An_Open_Learning_Platform/:

Հեռավար ուսուցման Moodle էլեկտրոնային հարթակն ունի մի շարք առավելություններ.

ա/ թույլ է տալիս ուսուցումը կազմակերպել համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառմամբ,

բ/ ընձեռում է հեռահաղորդակցության լայն հնարավորություններ՝ ներքին փոստ, տարբեր ձևաչափերի և մեծության ֆայլերի տեղադրում, ուսանողների կատարած առաջադրանքների ստուգում և գնահատում,

գ/ ուսումնամեթոդական նյութի և առաջադրանքների բաշխում շաբաթական կտրվածքով:

Ուսուցման հարթակում տեղադրված դասընթացի հանձնարարությունները դասակարգված են ըստ շաբաթների: Տրվող հանձնարարությունները ներկայացվում են վերնագրերով, նկարագրություններով,

ուսանողին առաջադրվող պահանջներով և վերջնաժամկետներով: Միաժամանակ, ըստ անհրաժեշտության, դասախոսը վերբեռնում է թեմատիկ նյութը, վարժությունները կամ ձայնագրությունները, որոնք ուսանողը պետք է օգտագործի՝ կատարելու տրված առաջադրանքները: Դասախոսը հանձնարարվող առաջադրանքը կարող է ձևակերպել հետևյալ կերպ.

Օրինակ՝

Unit 9. “Equal Rights for All”

Dear students

On February 12 please be ready for Unit 9. “Equal Rights for All” from the coursebook “Building ESP Listening Skills: Political Leadership”. I attach the recording /Track 9/ of Unit 9. Listen to the recording and be ready to do orally Exercises on pages 60-67 - Getting Started; Listening Practice A, B; Vocabulary Practice; Translation Practice A /please write the translation of 5 sentences in your work copybook/, Translation Practice B /use the glossary on pages 100-101 to render the text/ and Discussion Practice /Karapetyan, Vartapetian, Hovhannisyanyan, Petrosyan, 2017/.

Առցանց գործնական պարապմունքների ժամանակ, Անգլերենը հատուկ նպատակների համար /ESP/ դասընթացում կիրառվում են դասավանդման հետևյալ մեթոդները.

1. Քննարկումներ /Discussion/,
2. Բանավեճեր /Debate/,
3. Մասնավոր դեպքերի ուսումնասիրություններ /Case Study/,
4. Հարցազրույցներ /Interview/,
5. Չեկուցումներ /Presentation/,
6. Էսսեներ /Essay/,
7. Ամփոփումներ /Summary/,
8. Ռեֆերատներ /Report/:

Կիրառելով անգլերենը հատուկ կամ մասնագիտական նպատակների համար դասավանդման մեթոդների առանձնահատկությունները՝ նպատակ է դրված ձևավորել ուսանողների մոտ նոր լեզվամտածողություն, զարգացնել ու խորացնել նրանց համապատասխան մասնագիտական բանավոր և գրավոր հաղորդակցական հմտությունները: Ուստի, առցանց ուսուցման ընթացքում իրականացվում են հետևյալ խնդիրները.

ա/ բանավոր խոսքի զարգացում արդի մասնագիտական նյութի ընթերցման, վերարտադրման, տվյալ թեմայի և թեմատիկ իրադրությունների շուրջ քննարկում ծավալելու միջոցով,

բ/ բանավոր խոսքի զարգացում մասնագիտական արդի հիմնախնդիրների շուրջ բանավիճելու, փաստարկելու, գնահատելու, հարցազրույց վարելու, մասնավոր դեպքեր ուսումնասիրելու հմտությունների ձևավորման միջոցով,

գ/ բանավոր խոսքի զարգացում լսելով կամ դիտելով ընկալելու և վերարտադրելու մասնագիտական լեզվական նյութին առնչվող ձայնագրություններ և տեսանյութեր,

դ/ գրավոր խոսքի զարգացում մասնագիտական թեմաներով էսսեների, ամփոփումների և ռեֆերատների ներկայացման միջոցով:

Ներկայացվող ռեֆերատներն ամփոփվում են զեկուցումներով, որոնք ուղեկցվում են լսարանային ցուցադրություններով՝ PowerPoint ծրագրի կիրառմամբ: Ցուցադրումն իրականացնելու համար ուսանողն օգտվում է հեռավար ուսուցման հարթակի Share Screen գործիքից, որը թույլ է տալիս զեկուցողին իր համակարգչի էկրանը կիսել մնացածի հետ՝ դիտելու զեկուցման ցուցադրությունը:

Հաշվի առնելով հեռավար կրթության համակարգի բազմակողմանի տեխնոլոգիական հնարավորությունները՝ կարելի է վստահաբար պնդել, որ առցանց ուսուցումը ոչ միայն չափազանց արդիական ուղղություն է, այլև կրթության գլոբալացման գործընթացի միտում:

Հեռավար ուսուցումը որպես ուսուցման ժամանակակից, նորարարական, ինչպես նաև հեռանկարային ձև, արտացոլված է գործող պետական կրթական չափորոշիչներում և ամրագրված կրթության ոլորտին վերաբերող օրենքներում:

Հեռավար կրթության միջազգային փորձի ասպարեզում, բացի առանձին համալսարանների կրթական ծրագրերից և միջազգային կազմակերպությունների դրոյթներից, գործում են միջազգայնորեն ընդունված հռչակագրեր: Նման փաստաթուղթ է Բոլոնիայի հռչակագիրը, որի կարևորագույն դրոյթներից է բարձրագույն կրթական միջավայրում աջակցություն ցուցաբերելը ԲՈՒՀ-երին, որոնք կկիրառեն նորարարություններ՝ առավելագույնս օգտագործելով թվային տեխնոլոգիաները կրթական գործընթացում /researchgate.net/publication/330637306_BOLOGNA_DIGITAL_2020_Towards_a_digital_dimension_in_the_Bologna_Process/:

Կան նաև մի շարք միջազգային կազմակերպություններ, որոնք իրականացնում են հեռավար ուսուցման ծրագրեր և նպաստում առցանց ուսուցման զարգացմանն ու առաջընթացին: Դրանց թվում առանձնաձևում են մասնավորապես հետևյալը.

1. Ուսումնական համագործակցության միջազգային կազմակերպությունը /Commonwealth of Learning (COL)/, որի առաքելությունն է խթանել տարբեր տարածաշրջաններում հեռավար ուսուցման զարգացումը /col.org/,

2. Բաց և հեռավար կրթության միջազգային խորհուրդը /International Council for Open and Distance Education (ICDE)/, որի նպատակն է նպաստել ուսուցման նոր մոդելների ձևավորմանը հեռավար ուսուցման բնագավառում /icde.org/,

3. Եվրոպական միջազգային ծրագիրը հեռավար ուսուցման բնագավառում /EU Phare Multi-country Programmes/, մասնավորապես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում: Ծրագրի նպատակն է խթանել բազմակողմանի համագործակցությունը տարբեր եվրոպական երկրների միջև՝ հեռավար ուսուցման և վերապատրաստման դասընթացների միջոցով /core.ac.uk/download/pdf/286054352.pdf/:

Հեռավար ուսուցումը ներկայացված է նաև ՀՀ օրենսդրության մեջ: Համաձայն «Կրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի՝ ՀՀ-ում իրականացվող կրթության ձևերի շարքում առկա է նաև հեռավար (դիստանցիոն) ձևը: Համաձայն նույն օրենքի 14-րդ հոդվածի՝ կրթության գործընթացի կազմակերպումը, այդ թվում՝ հեռավար (դիստանցիոն) ձևով, իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իսկ մասնագիտությունների ցանկը հաստատում է ՀՀ կառավարությունը /arlis.am/documentview.aspx?docID=68299/:

Համաձայն նույն օրենքի՝

- բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել ուսուցման տարբեր ձևերով, այդ թվում՝ հեռավար (դիստանցիոն) ձևով,
- բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու առկա և այլ ձևերի զուգակցումը չի արգելվում:

Այսպիսով, ժամանակակից կրթության զարգացման համար բավարար չէ ուսուցման դասական-ավանդական մոդելը: Ամբողջ աշխարհում բարձրագույն կրթական համակարգը բարեփոխումների շրջան է ապրում, պարբերաբար ձեռնարկվում է ուսումնական ծրագրերի և ուսուցման գործընթացում կիրառվող մեթոդների բազմազանացում, որը կհամապատասխանի ժամանակի նոր պահանջներին: Այսօր հեռահաղորդակցության ժամանակակից միջոցներով հագեցած կրթական համակարգի ներդրմամբ բարենպաստ միջավայր է ստեղծվում հեռավար ուսուցման մոդելի արդյունավետ կիրառման համար: Առկա են հեռավար ուսուցման շարունակական զարգացման բոլոր անհրաժեշտ պայմաններն ու նախադրյալները: Որպես դասավանդման կայուն զարգացող մոդել՝ հեռավար ուսուցումը հավակնում է դառնալ իրական այլընտրանք ավանդականին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բեգիրջյան Խ., Խաչատրյան Վ., Հովհաննիսյան Գ., Բաբայան Ս. Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու, Երևան, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2017:
2. Karapetyan M. R., Vartapetian Z. H., Hovhannisyanyan G. V., Petrosyan A. H. Building ESP Listening Skills: Political Leadership. Yerevan: Yerevan University Press, 2017.
3. <https://www.arlis.am/documentview.aspx?docID=68299>
4. <https://www.col.org/>
5. <https://core.ac.uk/download/pdf/286054352.pdf>
6. <https://e-learning.yzu.am>
7. <https://www.icde.org>
8. <https://moodle.org>
9. https://www.researchgate.net/publication/333728846_Modular_Object_Oriented_Dynamic_Learning_Environment_MOODLE_An_Open_Learning_Platform
10. https://www.researchgate.net/publication/330637306_BOLOGNA_DIGITAL_2020_Towards_a_digital_dimension_in_the_Bologna_Process
11. <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000373633>

3. ВАРТАПЕТЯН – Организация процесса обучения в дистанционном режиме. – В данной статье рассматривается организация процесса дистанционного обучения с помощью учебной платформы Moodle. В 21-ом веке онлайн образование – одно из важнейших направлений развития международной системы образования. Являясь качественно новой образовательной средой, она перспективна благодаря развитию возможностей Интернета и широкому использованию информационных технологий. Внедрение новейших технологий в образовательную систему способствует более полной, эффективной организации и реализации образовательного процесса. Применение модели дистанционного обучения также направлено на диверсификацию учебных программ и методов обучения. В статье представлены широко используемые в учебном процессе методы, направленные на развитие навыков устного и письменного общения на английском языке.

Ключевые слова: дистанционное обучение, онлайн-обучение, платформа дистанционного обучения, телекоммуникации, учебная платформа Moodle, английский для специальных целей, методы обучения

Z. VARTAPETIAN – *Organisation of Distance Learning Process.* – The paper discusses the organisation of distance learning process using the Moodle platform. In the 21st century, online education is one of the most important directions in the development of the international education system. Being a completely new educational environment, online learning is promising due to the Internet and the widespread use of information technologies. The introduction of the latest technologies in the educational system has contributed to the more complete, effective organisation and implementation of the learning process. The application of the distance learning model is also aimed at diversifying the curricula and teaching methods. The paper presents some methods widely used in the educational process, which are aimed at the development of oral and written communication skills in English.

Key words: distance learning, online learning, distance learning platform, telecommunications, Moodle learning platform, English for Specific Purposes /ESP/, teaching methods

Ներկայացվել է՝ 23.03.2021
Երաշխավորվել է ԵՊՀ Անգլերենի թիվ 2 ամբիոնի կողմից
Ընդունվել է տպագրության՝ 14.04.2021